

---

## ՀԱՅ - ՌՈՒՄԻՆԱԿԱՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱԿԱՐԴԱԿՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

### ԳՐԻԳՈՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հայ-ռումինական ավանդաբար բարեկամական հարաբերությունները նոր լիցք, բովանդակություն և ձև ստացան 1990-ական թվականների սկզբներին Հայաստանի Հանրապետության անկախության հռչակմամբ: Հայ և ռումին ժողովուրդների միջև դարերի ընթացքում ձևավորված բարեկամական հարաբերությունները, որոնց նպաստում էր Ռումինիայի հայկական համայնքը, արդեն թևակոխում են միջպետական մակարդակ, որտեղ դիմագրավելու էին ժամանակի և տարածաշրջանի մարտահրավերներին:

Հայ-ռումինական միջպետական հարաբերությունները բավականին ակտիվ ու բովանդակալից ընթացք ստացան: Երկու երկրների նախագահների և բարձրաստիճան այլ պաշտոնյաների բազմաթիվ այցերը, միջպետական, միջկառավարական և միջգերատեսչական մի քանի տասնյակ պայմանագրերի ու համաձայնագրերի ստորագրումը դրա վկայությունն է: Սակայն միայն զուտ իրավական կապերի հաստատումը բավարար չէ, և ինչպես նշել է Ռումինիայի արտգործնախարար Անդրեյ Պլեշու, անհրաժեշտ է ջանքեր գործադրել և այդ կապերը դարձնել շոշափելի<sup>1</sup>:

#### **Դիվանագիտական հարաբերությունների հաստատումը**

Հայաստանի և Ռումինիայի միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման մասին համաձայնագիրը կնքվել է 1991 թ. դեկտեմբերի 17-ին արտգործնախարարներ Րաֆֆի Հովհաննիսյանի և Ադրիան Նստասեի կողմից (գ. 102, թ. 7): Այդպիսով, փաստորեն, Ռումինիան առաջին պետություններից մեկն է, որ ճանաչել է Հայաստանի անկախությունը (1991 թ. դեկտեմբերի 11-ին): Նույն օրը արտգործնախարարները ստորագրում են երկու երկրների արտգործնախարարությունների միջև խորհրդատվությունների մասին 5-ամյա արձանագրություն՝ ուղղված կողմերի միջև վստահության ու փոխըմբռնման խորացմանը: Այն բխում էր «քաղաքական, տնտեսական, մշակութային, գիտության ոլորտներում և մյուս բնագավառներում հարաբերությունների, բարեկամության ու համագործակցության զարգացման ցանկությունից և համապատասխանում էր միջազգային իրավունքի սկզբունքներին» (գ.102, թթ. 12-15): Դիվանագիտական հարաբերությունների զարգացման տրամաբանությանը հետևելով՝ Մոսկվայում Ռումինիայի դեսպանությունը կես տարվա ընթացքում մի քանի անգամ հստակ առաջարկություններ է ուղարկում Մոսկվայում ՀՀ

---

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ ԱԳՆ ՊՂԱ, գ. 48, թ. 29 (այսուհետ այստեղից մեջբերումների հղումները կտրվեն տեքստում):

դեսպանատուն՝ Բուխարեստում ԶԶ ներկայացուցչություն բացելու վերաբերյալ (գ. 198, թ. 37): Հայկական կողմը ոչ միայն կարևորում էր այս համաձայնագրը, այլ նաև ակնկալում էր, որ Անդրկովկասում տարածաշրջանային դեսպանություն բացելիս Ռումինիան նախապատվությունը կտա Երևանին (նույն տեղում, թ. 49): Ի դեպ, հայկական կողմի այս հավակնությունն արժանացել էր ռումինական կողմի հավանությանը, քանի որ 1991 թ. դեկտեմբերի 16-18-ը պաշտոնական այցով Ռումինիայում գտնվող արտգործնախարար Րաֆֆի Հովհաննիսյանին ռումինացիները հայտնում են, որ «առաջնորդվելով մեր երկու ժողովուրդների միջև գոյություն ունեցող դարավոր բարեկամությամբ և հաշվի առնելով Հայաստանի ներկա ժողովրդավարական վարչակարգը, նպատակահարմար են գտնում Երևանում ունենալ դեսպանատուն (մինչև 10 մարդ), որի աշխատակիցները կհավատարմագրվեն նաև Վրաստանում և Ադրբեջանում» (նույն տեղում, թ. 10):

Դեսպանատների բացումը մեկ անգամ ևս կարևորում է փոխարտգործնախարար Ա. Նավասարդյանն իր 1992 թ. զեկուցագրում: Նա նշում է. «Եթե նպատակահարմար չի դիտվում Ռումինիայում ունենալ Հայաստանի դեսպանատուն, ապա ճիշտ կլինի գոնե Կոնստանցայում տեղի հայերից որևէ մեկին նշանակել պատվավոր հյուպատոս, ինչը մեծապես կօգներ երկկողմ համագործակցությանը»: «Երկու կարծիք չի կարող լինել Հայաստանում Ռումինիայի դեսպանության բացման մասին: Մեզ անհրաժեշտ է հնարավորինս արագացնել այդ հարցի լուծումը: Հակառակ դեպքում ռումինական դեսպանություն կարող է ստեղծվել Բաքվում՝ մեզ համար այստեղից բխող բոլոր հետևանքներով (նկատի ունենալով թուրք-ռումինական հարաբերությունների ներկա վիճակը, զարմանալի է, որ դա դեռևս տեղի չի ունեցել)» (նույն տեղում, թթ. 68-69): Բացի այդ, փոխնախարարը գտնում էր, որ «քաղաքական համագործակցության շրջանակներում մենք կարող ենք օգտվել ռումինական դիվանագիտական ծառայության փորձից՝ մեր ծառայությունն ստեղծելու համար: Ռումին դիվանագետները պատրաստ են մեզ համար կազմակերպել սեմինարներ, խորհրդակցություններ, ընդունել երիտասարդ փորձնակ-դիվանագետների և այլն»: Առավել ևս՝ «համագործակցության այս բնագավառի մասին խոսելիս հարկ է ուշադրություն դարձնել ինֆորմացիոն աշխատանքին: Չնայած ռումինական կողմը պատրաստ է ընդունել և տարածել մեր ինֆորմացիան (ավելորդ է նշել, թե դա որքան կարևոր է մեզ համար), այդպիսին չի կազմակերպվում ոչ ԶԶ արտգործնախարարության, ոչ էլ այլ նախարարությունների ու գերատեսչությունների կողմից: Ռումինիայի լայն հասարակայնությունը Հայաստանի և ԼՂՀ-ի մասին բացարձակ անտեղյակ է կամ տեղեկանում է այլ աղբյուրներից» (նույն տեղում, թ. 37):

Այսպիսով, տվյալ ժամանակահատվածում հայ-ռումինական հարաբերությունները բավարար մակարդակի վրա չէին, և առկա ներուժը չէր օգտագործվում անհրաժեշտ արդյունավետությամբ: Հետևաբար, ԶԶ արտգործնախարար Րաֆֆի Հովհաննիսյանը, գտնելով, որ Ռումինիայի հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատումը իրական հնարավորություններ է ստեղծում զարգացնելու հայ-ռումինական փոխշահավետ

համագործակցություն քաղաքական, առևտրատնտեսական, գիտատեխնիկական, մշակութային և այլ բնագավառներում, երկրի նախագահին ուղղված իր 1991 թ. դեկտեմբերի զեկուցագրում նպատակահարմար է համարում. «1. Ըստ ձեռք բերված համաձայնության՝ 1992 թ. փետրվարին Հայաստան հրավիրել ռումինական պաշտոնական պատվիրակություն և փորձագետների խումբ: 2. Ռումինական պատվիրակության այցելության ընթացքում ստորագրել երկու երկրների միջև հյուպատոսական կոնվենցիա<sup>2</sup> և մշակութային համագործակցության վերաբերյալ համաձայնագիր: Քննարկել դեսպանատներ և հյուպատոսություններ բացելու վերաբերող հարցերը Երևանում և Բուխարեստում, Գյումրիում և Կոնստանցայում<sup>3</sup>: 15 օրվա ընթացքում որոշել Ռումինիայի դեսպանատան շենքի հարցը Երևանում և խնդրել ռումինական կողմին որոշել հայկական դեսպանատան հարցը Բուխարեստում: Զուգահեռաբար հարց բարձրացնել Ռուսաստանի արտգործնախարարության առջև Բուխարեստում և Կոնստանցայում նախկին ԽՍՀՄ-ի ունեցվածքից Հայաստանի ներկայացուցչություններին աշխատանքային և բնակարանային տարածություններ հատկացնելու վերաբերյալ: 3. Հանձնարարել էկոնոմիկայի նախարարությանը միջոցներ ձեռք առնել 1991 թ. առևտրատնտեսական համաձայնագրի իրագործման ուղղությամբ: 4. Հանձնարարել շահագրգիռ նախարարություններին և գերատեսչություններին մշակել անհրաժեշտ ծրագիր Ռումինիայի հետ տրանսպորտի բնագավառում երկկողմ, հնարավորության դեպքում՝ եռակողմ համագործակցություն ստեղծելու վերաբերյալ: 5. Ռումինիայի հետ համագործակցության կորորդինացման, իրագործման և հսկողության հարցը դնել ՀՀ արտգործնախարարության վրա» (նույն տեղում, թթ. 13-14):

Հյուպատոսական կոնվենցիան ստորագրվում է միայն 1994 թ.՝ ապրիլի 18-20-ը ՀՀ ԱԳ նախարար Վ. Փափազյանի Ռումինիա կատարած այցի ընթացքում (գ. 199, թ. 49): Դեսպանատների հարցը նույնպես լուծվում է ոչ առանց տևական ձգձգումների: Հարցի լուծումն ուշանում է այնքան, որ 1997 թ. սեպտեմբերի 3-4-ը ՀՀ արտգործնախարար Վ. Օսկանյանի բուխարեստյան այցի ժամանակ Ռումինիայի արտգործնախարար Ա. Սևերինը մեկ անգամ ևս հաստատում է իր կառավարության որոշումը՝ 1997 թ. ընթացքում Հայաստանում Ռումինիայի դեսպանություն բացելու վերաբերյալ (գ. 216, թ. 21): Սակայն հարցի լուծումը կրկին հետաձգվում է: Ռումինիայի նախագահ Էմիլ Կոնստանտինեսկուն 1998 թ. հուլիսի 3-ի իր երևանյան այցի ժամանակ պատրաստակամություն է հայտնում 1998 թ. ընթացքում Երևանում դեսպանություն բացելու վերաբերյալ (գ. 52, թ. 7): Սակայն Ռումինիա-

---

<sup>2</sup> Ռումինական կողմը հյուպատոսական կոնվենցիայի նախագիծը ներկայացրել էր ՀՀ ԱԳ նախարարի և փոխնախարարի 1991 թ. դեկտեմբերի 16-18-ը Ռումինիա կատարած այցելության ժամանակ և առաջարկել էր ստորագրել մոտակա ժամանակներում (տե՛ս նույն տեղը, թ. 9):

<sup>3</sup> Հյուպատոսությունն առաջարկվում էր բացել Կոնստանցայում՝ հաշվի առնելով նրա նշանակությունը սևծովյան ավազանում, ինչպես նաև՝ այնտեղ հայկական կազմակերպված համայնքի առկայությունը (տե՛ս նույն տեղը, թ. 9):

յի դեսպանությունը Երևանում բացվում է միայն 1999 թ. փետրվարի 9-ին, դեսպան է նշանակվում Պավել Պլատոնան<sup>4</sup>, մինչդեռ Բուխարեստում ՀՀ դեսպանատունը բացվել էր դեռևս 1994 թ. փետրվարի 24-ին:

Այս ձգձգումների պատճառն այն էր, որ երկկողմ հարաբերությունների զարգացման արագությունը չէր համընկնում ժամանակի և պայմանների հրամայականին: Այս ձգձգումները չէին կարող զոյություն ունենալ առանց այն առարկայական պատճառների, որոնք բավականին սահմանափակում էին ՀՀ արտաքին քաղաքական ակտիվությունն ու ազատությունը: Առաջին հերթին խոսքը դարաբառյան հակամարտության և հարևանների կողմից իրականացվող շրջափակման մասին է, ինչպես նաև ստեղծված նոր միջազգային իրավիճակում արտաքին քաղաքական վերակողմնորոշման մասին: Շատ կարևոր էր նաև տեղի ունեցած փոփոխությունների և հնարավոր գործընթացների հանդեպ պաշտոնական Մոսկվայի վերաբերմունքը: Նույն ժամանակահատվածում պաշտոնական Թբիլիսին բավականին ակտիվ աշխատանք էր տանում Բուխարեստի դեսպանատունը նստավայր դարձնելու ուղղությամբ, ինչի իրագործման պարագայում Հայաստանը տարածաշրջանում կարող էր հայտնվել առնվազն երկրորդ տեղում: Այս իրավիճակն էլ, մեծ մասամբ, պայմանավորված էր Հարավային Կովկասի հանդեպ Ռումինիայի սպասողական և զգուշավոր քաղաքականությանը: Սակայն, բարեբախտաբար, Բուխարեստը, հենվելով տարածաշրջանում հավասարակշռված քաղաքականություն վարելու իր ձգտման վրա, Թբիլիսիում դեսպանության բացումը պայմանավորում էր Երևանում իր դեսպանությունը բացելով (գ. 202, թ. 71):

Բավականին բարդ ընթացք ունեցավ նաև դեսպանատների շենքերի հարցի լուծումը: Հայկական կողմի առաջարկին ի պատասխան՝ 1993 թ. մայիսի 31-ին ռումինական կողմը նոտայով պատասխանում է, որ հնարավորություն չունի Հայաստանի դեսպանության համար շենք տրամադրելու (գ. 199, թ. 18): Փոխարենը 1999 թ. մարտի 25-ին Հայաստանում Ռումինիայի դեսպան Պլատոնան բարձրաձայնում է Ռումինիայի դեսպանության համար շենքի ձեռքբերման մասին և առաջարկում է քննարկել շենքերի փոխանակման հնարավորությունը: Ըստ այդմ, Ռումինիայի իշխանությունների կողմից Հայաստանի դեսպանությանը կտրամադրվեր շինություն Բուխարեստում, որի դիմաց ռումինացիները կստանային նույն մակարդակի շինություն Երևանում (գ. 48, թ. 8): Սակայն հայկական կողմը ներկայացնում է այլ առաջարկ. 1999 թ. մայիսի 3-5-ը Բուխարեստում գտնվող Վ. Օսկանյանը Ռումինիայի վարչապետ Ռադու Վասիլիեին խնդրում է աջակցել Չաուշեսկուի ժամանակ բռնագրավված Անա Մելիք առանձնատունը Բուխարեստի հայկական եկեղեցուն վերադարձնելու գործում, որը կարող էր հետագայում

<sup>4</sup> Տե՛ս նույն տեղը, թ. 14: 1993 թ. օգոստոսի 12-ին Ռումինիայում ՀՀ ԱԳՆ դիվանագիտական ներկայացուցիչ է նշանակվում Կարինե Աֆրիկյանը՝ ՀՀ դեսպանության բացման նախապատրաստական աշխատանքները կազմակերպելու նպատակով: Արդեն 1994 թ. մարտի 3-ին ՀՀ արտգործնախարարի տեղակալ Գեորգի Ղազինյանը նշանակվում է Ռումինիայում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան (տե՛ս նույն տեղը, գ. 198, թ. 51): Իսկ ահա 1999 թ. հուլիսին Ռումինիայում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան է նշանակվում Կարինե Ղազինյանը (տե՛ս նույն տեղը, գ. 52, թ. 14):

դառնալ Բուխարեստուն ՉՉ դեսպանության շենքը: Վարչապետը խոստանում է հետամուտ լինել խնդրի լուծմանը (նույն տեղը, թ. 33):


Այսպիսով, հայ-ռուսական դիվանագիտական հարաբերությունների հաստատման գործընթացն ուներ ելևէջներով հազեցած հետաքրքիր հետագիծ, ինչը պայմանավորված էր միմյանց հանդեպ ունեցած դիրքորոշումներով ու քաղաքական հետաքրքրություններով: Դրանք բավականին հստակ արտահայտվում էին փոխադարձ այցերի և հանդիպումների ժամանակ միմյանց արտաքին քաղաքական գերակայությունների հանդեպ ցուցաբերած մոտեցումներում:

**Քաղաքական համագործակցությունը**

Միջպետական հարաբերությունների քաղաքական մակարդակի չափման տեսանկյունից հետաքրքիր է պաշտոնական այցելությունների մակարդակի և հաճախականության համադրությունը (այցերի պատկերավոր համադրությունը տես՝ աղյուսակ 1-ում):

**Աղյուսակ 1**

**Հայաստան - Ռուսիա պաշտոնական այցերի համադրություն<sup>5</sup>**



Երկու երկրների միջև 1991-2012 թթ. տեղի են ունեցել 10 նախագահական փոխայցելություններ, 5 փոխայցելություններ երկու երկրների օրենսդիր մարմինների ղեկավարների մակարդակով, 4 վարչապետական այցեր, որտեղ հայկական կողմն ավելի ակտիվ է գտնվել, ինչպես նաև 27 նախարարական կամ նախարարի մակարդակի փոխայցեր, որոնք ուղեկցվել են ընդունող երկրի բարձրաստիճան ամենատարբեր պաշտոնյաների հետ հանդիպումներով: Բացի այդ՝ Ամենայն հայոց կաթողիկոսները չորս անգամ այցելել են Ռուսիա՝ 1995, 2000, 2008 և 2012 թթ., իսկ Ռուսիայի Ուղղափառ եկեղեցու պատրիարքը Հայաստան է այցելել 1996 և 2001 թթ.:


Այս ցուցանիշները վկայում են երկու երկրների միջև առկա որոշակի հետաքրքրվածության մասին: Մյուս կողմից, նույնամակարդակ և գրեթե նույնաքանակ փոխադարձ այցերի առկայությունը կարող է փաստել նաև դրանցից ոմանց արարողակարգային բնույթի մասին: Առավել ևս, հաշվի

<sup>5</sup> Աղյուսակում 4-ը համապատասխանում է քաղաքական բարձրագույն՝ նախագահական մակարդակին, 3-ը՝ օրենսդիր մարմնի ղեկավարի, 2-ը՝ կառավարության ղեկավարի, 1-ը՝ նախարարական մակարդակին:

առնելով երկկողմ հարթության վրա հարցերի լուծման գործընթացի բավականին մեծ տևականությունը, կարելի է փաստել, որ կողմերի միջև առկա քաղաքական հարաբերությունների մակարդակն ու հագեցվածությունը հեռու էին տվյալ ժամանակի պահանջներն ու պայմանները բավարարելուց: Աղյուսակ 1-ում պատկերված կորերով կարելի է ծանոթանալ փոխհարաբերությունների՝ քննարկվող ժամանակահատվածի ընթացքում երկու կողմերի այցերի մակարդակի հետագծին: Պարզ երևում է, որ 2003-08 թթ. առավել ակտիվ է գործել ՀՀ նախագահը, քան իր ռունինացի գործընկերը, ում այցերն ավելի լայն ժամանակային բաշխվածություն ունեն:


Աղյուսակ 2-ից երևում է, որ երկուստեք բարձրագույն մակարդակով այցերի ամենաակտիվ ժամանակահատվածը 2003-08 թվականներն է:

**Աղյուսակ 2**



Մինչդեռ հակառակ տրամաբանությունն է գործում փոխադարձ այցերի զուտ քանակական դիտարկման ժամանակ (աղյուսակ 3): Բանն այն է, որ կողմերի միջև այցերի առավել ակտիվ փոխանակությունը տեղի է ունեցել 2001 թ., որը, փաստորեն, տվյալ պահի դրությամբ հայ-ռունինական հարաբերություններում ակտիվության գագաթնակետն է (8 փոխայցեր):

**Աղյուսակ 3**



Այնուհետև ակտիվությունը նվազել է՝ 2004-05 թթ. հասնելով զրոյական մակարդակի, և միայն 2008 թ. նորից որոշակիորեն աշխուժացել է: Կողմերի միջև համանման ակտիվություն դրսևորվել է նաև 1994, 2012 թթ.: Ի դեպ, 1994 թ. ավելի ակտիվ է գտնվել հայկական կողմը, որը ղարաբաղյան ճակատում հրադադարից հետո իրականացրել է երկու այց, որոնցից մեկը՝ բարձրագույն մակարդակով: Այս ընթացքում ռումինական կողմի հարաբերական պասիվությունը կարող էր պայմանավորված լինել ղարաբաղյան հակամարտության գործոնով: Կարող ենք ենթադրել, որ այդ ժամանակահատվածում ռումինական կողմը, ցանկանալով պահպանել որոշակի «հավասարակշռություն» Հայաստանի և Ադրբեջանի միջև, փորձում էր նախապատվություն չտալ որևէ մեկի հետ շփումներին:

Մյուս կողմից, Հայաստանի և Ռումինիայի միջև փոխայցերն ավելի ակտիվ են եղել բարձրագույն մակարդակով հանդիպումներից առաջ և հետո: Այս հանգամանքը ինչ-որ առումով տեղավորվում է միջպետական հարաբերություններում առկա «տեղատվությունների» և «մակընթացությունների» տրամաբանության մեջ, քանի որ նախագահական մակարդակով այցելություններից առաջ բուն նախապատրաստական աշխատանքներ են ընթանում: Նույնատիպ աշխուժություն է դրսևորվում նաև նախագահական այցերից հետո՝ այցի ընթացքում ձեռք բերված պայմանավորվածություններն ու առաջադրված հարցերը առավել մանրամասն քննարկելու և գործնական քայլեր ձեռնարկելու համար<sup>6</sup>: Այնուամենայնիվ, հաշվի առնելով այն, որ հայ-ռումինական հարաբերություններում փոխայցերի ակտիվությունն արդեն երեք անգամ (1992-93 թթ., 2004-05 թթ. և 2010 թ.) նվազել է մինչև զրոյական մակարդակ, կարելի է եզրակացնել, որ այցերը հետապնդում են նաև առկա հարաբերությունների մակարդակը և բարիդրացիական մթնոլորտը պահպանելու նպատակ: Իսկ ժամանակ առ ժամանակ աճող աշխուժությունն ի գործ է տեսանելի փոփոխություններ արձանագրելու: Ուստի պատահական չէ, որ Հայաստանում Ռումինիայի դեսպան Կրիստա Ռոդիթա Պրոնարիուն, 2011 թ. սեպտեմբերի 23-ին հանդիպելով լրագրողների հետ, հայ-ռումինական հարաբերությունները գնահատել է «սառած»<sup>7</sup>:


Եթե հայ-ռումինական հարաբերությունները դիտարկենք զուտ ՀՀ արտաքին քաղաքականության տեսանկյունից, ապա այն կարող ենք բաժանել երեք պայմանական հատվածների՝ ձևավորման, կայացման, զարգացման, որոնցից յուրաքանչյուրը համընկնում է ՀՀ նախագահների կառավարման շրջանների հետ: Տեսանելի է, որ ՀՀ առաջին նախագահի կառավարման 7

<sup>6</sup> Պետք է հաշվի առնել, որ նախագահական այցեր տեղի են ունենում նաև այդ երկրում որևէ միջոցառման մասնակցելու նպատակով, ինչի վերագրելը միայն երկկողմ հարաբերություններին ու դիտելը որպես հավանական ակտիվություն երկկողմ հարաբերություններում չի արտացոլի իրականությունը: Այդպիսին էր 2012 թ. հոկտեմբերին ՀՀ նախագահի այցը Ռումինիա՝ ԵԺԿ համագումարին մասնակցելու նպատակով: Այս այցն ու դրա արդյունքները կարելի է վերագրել միայն ԵԺԿ համագումարին ու դրա շրջանակներին: Սակայն, այնուամենայնիվ, արձանագրվել է նախագահի աշխատանքային այց տվյալ երկիր, ինչը չի կարելի հաշվի չառնել:

<sup>7</sup> Տես «Հայ-ռումինական հարաբերությունները սառել են», 23.09.2011 թ., <http://www.report.am>

տարիներին, այսինքն՝ հայ-ռումինական հարաբերությունների ձևավորման շրջանում, տեղի են ունեցել 2 նախագահական և 7 նախարարական փոխայցելություններ (միջինը՝ 0,3 նախագահական և 1 նախարարական այց տարվա ընթացքում): ՀՀ երկրորդ նախագահի կառավարման 10 տարիներին, այն է՝ հայ-ռումինական հարաբերությունների կայացման շրջանում, տեղի են ունեցել 6 նախագահական և 12 նախարարական փոխայցելություններ (միջինը՝ 0,6 նախագահական և 1,2 նախարարական այց տարվա ընթացքում): Իսկ ահա ՀՀ երրորդ նախագահի կառավարման 5 տարիներին՝ հայ-ռումինական հարաբերությունների զարգացման փուլ, տեղի են ունեցել 2 նախագահական և 8 նախարարական փոխայցելություններ (միջինը՝ 0,4 նախագահական և 1,6 նախարարական այցեր տարվա ընթացքում): Նախարարական մակարդակով այցերի քանակի աճի միտումն ակնհայտ է, մինչդեռ նախագահական մակարդակով այցերի թիվը նվազել է (ակտիվության աճի միտումը պատկերավոր տե՛ս աղյուսակ 4-ում): Միաժամանակ, հաշվի առնելով, որ հարաբերությունների իրական զարգացումը ենթադրում է փոխայցերի առավել կտրուկ աճ՝ ինչպես հորիզոնական, այնպես էլ ուղղահայաց, կարող ենք պնդել, որ հայ-ռումինական հարաբերություններում առաջընթացը չափավոր է: Այդ է վկայում այն հանգամանքը, որ այցելող պաշտոնյաների բազմազանությունը մնաց անփոփոխ:

**Աղյուսակ 4**



Այսպիսով, հայ-ռումինական միջպետական հարաբերությունները բավականին բարենպաստ էին, սակայն հետագա զարգացման համար չստացան նպաստավոր նոր ազդակներ: Հայաստանի և Ռումինիայի միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատումը տեղի ունեցավ առանց ավելորդ բարդությունների, իսկ դեսպանատների բացումն ու հարաբերու-



թյունների հետագա զարգացումը հանդիպեցին խոչընդոտների ու բարդությունների: Հայ-ռումինական հարաբերությունները չեն անցել արձանագրված միջին սահմանագիծը, իսկ փոխհարաբերություններում առկա ակտիվությունը երբեմն իջել է զրոյական մակարդակի: Այս հանգամանքը, ամենայն հավանականությամբ, պայմանավորված է եղել երկկողմ օրակարգում ընդգրկված հարցերով և կողմերի արտաքին քաղաքական գերակայություններով: Սա ոչ թե բացառություն, այլ օրինաչափություն է ՀՀ արտաքին քաղաքականության արևելաեվրոպական ուղղության մեջ, քանի որ մի կողմից այս տարածաշրջանի երկրների և մյուս կողմից Հայաստանի Հանրապետության ընտրած արտաքին քաղաքական առաջնային գերակայություններն ունեն որոշակի տարբերություններ<sup>8</sup>: Այս հանգամանքն էլ կողմերին ստիպում է հարաբերություններում լինել զուսպ և զգուշավոր:

**ГРИГОР ГРИГОРЯН – *Уровень и политическое содержание армяно-румынских межгосударственных отношений.*** – В статье рассматривается установление дипломатических отношений между двумя странами и открытие в Ереване и Бухаресте диппредставительств. Анализируются данные об обмене официальными визитами, дающие пищу для размышлений об интенсивности и уровне армяно-румынских отношений: состоялось около десятка президентских и свыше двух десятков министерских визитов. Но, несмотря на это, политическая составляющая двусторонних отношений оставляет желать лучшего. Более насыщенному их содержанию препятствуют внешнеполитические приоритеты сторон, которые, имея точки соприкосновения, во многом различны. Тем не менее существующая база может стать плодотворной почвой для эффективного развития.

**GRIGOR GRIGORYAN – *The Level and the Political Component of the Armenian-Romanian Interstate Relations.*** – The article deals with the history of establishment of diplomatic relations between Armenia and Romania and embassies in the two capitals which were not entirely smooth and unbiased. In the article we also analyse the data on bilateral official visits that are displayed in the corresponding charts. The data provide material for speculation on the level and the political component of the relations between Armenia and Romania. We can see that there have been a dozen presidential and more than two dozens of ministerial visits between the two countries. Nevertheless, the political component leaves much to be desired as it did not achieve the condition that consists with the requirements of the time and the logics of the friendly relations between the two nations. The reason is that the parties have adopted different foreign policy priorities, which though have an edge in common but different ways of development and solution. Anyway the existing base can be a fertile ground for development of more effective relations between Armenia and Romania.

---

<sup>8</sup> Տե՛ս **Գրիգոր Գրիգորյան**, Արտաքին քաղաքական գերակայությունների գործոնը հայ-չեխական միջպետական հարաբերություններում, «Բանբեր Երևանի համալսարանի», «Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն», 2012, № 137.6, էջ 40-54: